ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

#Elections4All
Ընտրություններ բոլորի համար

YSPS

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸՆՏՐՈՂ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԸՆՏՐՈՂ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան
2021

*Ուղեցույցը հրատարակել է Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցը **«Ընտրություններ բոլորի համար 2021 - տեղական դիտորդություն և քաղաքացիական հասարակության կողմից քաղաքացիների իրավազորում»** ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՕքսԵԴԷն հիմնադրամի, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի և Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի հետ համատեղ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:*

Այս ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում հեղինակները, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Այս հրատարակության ոչ մի մաս չի կարող թարգմանվել, տպագրվել կամ տարածվել որևէ ձևով՝ էլեկտրոնային (խտասկավառակ, համացանց և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ պատճենահանման, ձայնագրման կամ տեղեկության պահպանման կամ տարածման որևէ համակարգի միջոցով առանց Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի նախնական գրավոր թույլտվության:

Հեղինակ՝ Հայկուհի Հարությունյան, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ (2016թ. հրատարակված ուղեցույցի հեղինակ)

*Սույն ուղեցույցը վերախմբագրվել է սահմանադրագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Նարինե Ալեքսանյանի կողմից «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում 07.05.2021թ. դրությամբ կատարված փոփոխությունների հիման վրա

© Քաղաքական դասընթացների երևանյան դպրոց

Հարգելի բարեկամ, հարգելի առաջին անգամ ընտրող

Դու մասնակից ես դառնում մի ծրագրի, որով քո քաղաքացիական կերպի ձևավորման հերթական անկյունաքարն է դրվում:

Եվրոպական միության կողմից Հայաստանին ընտրական աջակցության ծրագրի շրջանակում Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցն իրականացնում է «Ժողովրդավարական քաղաքացիության ուսուցում. առաջին անգամ ընտրող» ծրագիրը, որին մասնակցում են հանրապետության թվով 50 ավագ դպրոցների աշակերտներ:

Սիրելի առաջին անգամ ընտրող

Այստեղ դու կսովորես, որ ընտրությունը քվեարկելը չէ սոսկ, որ քվեարկելը քո մասնակցության ձևն է միայն, իսկ էականն այն է, որ դու որոշում կայացնելու, մասնակցելու, ընտրություն կատարելու իրավունք ունես: Մինչ այսօր քո փոխարեն որոշումներն ընդունել են մեծերը, սակայն հիմա դու՝ քո այլևս հասունության հանգամանքի բերումով, ինքդ ես անելու դա, այդպիսով դառնալով հանրային գործընթացների լիիրավ մասնակից:

Պատասխանատու և գիտակից մոտեցմամբ որոշում կայացնելը, ոչ միայն ընտրությունների, այլև կյանքի բոլոր առիթներով, մշտապես կնպաստի քո առաջընթացին ու թե ուզում ես հաջողես և ապրես ժողովրդավարական, զարգացող երկրում, ապա պետք է նկատի ունենաս, որ որոշում ընդունելու, մասնակցելու, ընտրություն կատարելու քաղաքացիական վարքագիծն է այդ նպատակին տանող ճանապարհը: Այս ծրագրով ևս կանգնած ենք քո կողքին ու մեր աշխատանքի իմաստն էլ եվրոպական քաղաքակիրթ ազգերի ընտանիքում իր ժողովրդավարական ու քաղաքացիական արժեհամակարգով ներկա Հայաստանի մեր տեսլականը քեզ փոխանցելն է:

Հավատում ենք՝ քո ընտրությունը, քո ձայնը կարևոր է, քանզի քո ընտրությամբ դու մասնակից ես դառնալու այն պետության կերտման գործին, որն առարկայանալու է որպես ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ:

Քո և ընկերներիդ կատարած ընտրությունը քայլ է, որ արվելու է դեպի այդ նպատակը: Այդ ճանապարհին քեզ ու նրանցից յուրաքանչյուրին հաջողություն ենք մաղթում:

Արմեն Ջաքարյան

Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի հիմնադիր տնօրեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարություն և ընտրական իրավունք 6
Քաղաքացիությունը որպես համակարգ 8
Ընտրական իրավունք 12
Ընտրական իրավունքի վերաբերյալ ընդհանուր դրույթներ 14
Քվեարկության սկզբունքներ 16
Ընտրական գործընթացների կազմակերպում 19
Ընտրական հանձնաժողովի կազմը 19
Վստահված անձինք 20
Դիտորդներ 22
Ընտրողների ռեգիստր և ընտրական ցուցակներ 23
Նախընտրական քարոզչություն 25
Քվեարկություն 28
Քվեարկության խցիկներ 29
Քվեաթերթիկ և ծրար 30
Քվեարկության կարգը 32
Ինչ փաստաթուղթ է պետք ունենալ քվեարկության համար 35
Քվեաթերթիկների վրա նշում կատարելու կարգը 35
Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ 38
Ազգային ժողովի ընտրություններ 41

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ժողովրդավարություն բառը ծագում է հունարեն «դեմոս», որը նշանակում է «մարդիկ» և «կրատոս», որը նշանակում է «իշխանություն» բառերից: Այսպիսով, ժողովրդավարությունը բառացիորեն կարելի է վերարտադրել որպես «ժողովրդի իշխանությամբ» կառավարման ձև, որը պայմանավորված է մարդկանց կամքի արտահայտությամբ:

Ժողովրդավարությունը դիկտատուրա չէ, որտեղ ղեկավարում է միայն մեկ անձ, այն նաև օլիգարխիա չէ, որտեղ ղեկավարում է հասարակության միայն մի փոքր շերտ: Ժողովրդավարությունը չպետք է նաև լինի «մեծամասնության իշխանություն», որտեղ փոքրամասնությունների շահերը հաշվի չեն առնվում և ամբողջապես արհամարհվում են:

Ժողովրդավարության էությունը որոշումներ կայացնելիս յուրաքանչյուրի ձայնը և կարծիքը հաշվի առնելու մեջ է:

> Ժողովրդի կողմից, ժողովրդի միջոցով, ժողովրդի համար:
>
> **Աբրահամ Լինկոլն**

Կառավարմանը մասնակցություն ունենալու ամենաարտահայտիչ ձևը երկրում տեղի ունեցող ընտրական գործընթացներին մասնակցելն է: Ժողովրդավարությունը, այնուամենայնիվ, ավելին է, քան միայն ընտրությանը մասնակցելը, որովհետև գոյություն ունեն քաղաքականության և կառավարման մեջ ներգրավվելու բազմաթիվ այլ ձևեր ևս: Ժողովրդավարության արդյունավետությունը, փաստացիորեն, կախված է մարդկանցից: Եթե մարդիկ քվեարկում են միայն 4 կամ 5 տարին մեկ անգամ կամ ընդհանրապես չեն քվեարկում, իսկ այդ միջակայքում ոչինչ չեն անում, այդ դեպքում չի կարելի ասել, որ կառավարումն իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի մասնակցությամբ: Չի կարելի ասել, որ կառավարման նման համակարգը ժողովրդավարական է:

Տեղեկացված լինելը, թե ինչ է կատարվում, ինչ որոշում է կայացվում «ժողովրդի անունից» և մասնավորապես մեր իսկ ներկայացուցիչների կողմից, այս գործընթացի մի մասն է:

Առանց ժողովրդի արձագանքը ստանալու, առաջնորդները կարող են ղեկավարել միայն իրենց կամքով և իրենց առաջնահերթություններից ելնելով:

Երբ որոշումները լինում են ոչ ժողովրդավարական կամ ընդդեմ մարդու իրավունքների, պետք է ջանքեր գործադրել ձեր ձայնը լսելի դարձնելու համար, որպեսզի որոշումները վերանայելու անհրաժեշտություն առաջանա: Վերջինս իրականացնելու ամենաարդյունավետ ձևը նույն խնդրով մտահոգ այլ մարդկանց միանալն է:

> Յուրաքանչյուր ոք անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք ունի:
>
> Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այդ կամքն իր արտահայտությունը պետք է գտնի պարբերական և անեղծ ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, գաղտնի կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարարժեք ձևերի միջոցով:
>
> *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, (10 դեկտեմբերի, 1948թ.), Հոդված 21*

Անվերապահորեն մասնակցեք ընտրություններին և քվեարկությանը, երբ այդպիսի հնարավորություն է ընձեռնված: Երբ մարդիկ չեն մասնակցում քվեարկությանը, իշխանությունները դառնում են անպատասխանատու:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱԿԱՐԳ

Քաղաքացիությունն այն անհատների ակտիվ անդամակցությունն ու մասնակցությունն է հասարակության գործընթացներին, ովքեր օժտված են իրավունքներով և պարտավորություններով, և ովքեր քաղաքականության վրա ազդելու կարողություն ունեն: Քաղաքացիությունը պետք է լինի ավելին, քան որպես անձի իրավական կարգավիճակ. այն նաև տվյալ հասարակությունում անձի ունեցած սոցիալական դերն է:

Մարդկանց մեծամասնությունն այս կամ այն պետության քաղաքացի է. սույն հասկացությունը կարգավիճակը սահմանում է իրավական առումով, մարդկանց օժտելով որոշակի արտոնություններով կամ իրավունքներով: Այն սահմանում է նաև որոշակի պարտականություններ, որոնց առնչությամբ պետությունը, իր լիազորությունների շրջանակում, անհատներից ակնկալում է պատասխանատու մոտեցում: Ըստ այդմ, քաղաքացիները պետության նկատմամբ ունեն որոշակի պարտավորություններ, ինչի դիմաց պետությունից ակնկալում են սեփական շահերի պաշտպանություն:

Անհատ - հասարակություն հարաբերությունների շրջանակն ընդունված է բաժանել չորս հարթության, որոնք նույնական են հասարակության համար ընդունելի չորս ենթահամակարգերին: Դրանք են՝ քաղաքական/ իրավական, սոցիալական, մշակութային և տնտեսական հարթությունները:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիության այս չորս հարթությունների ամբողջությունը կարելի է համեմատել աթոռի հետ, որտեղ աթոռի չորս ոտքերը կարող են լինել քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային հարթությունները:

Քաղաքական հարթությունը վերաբերում է քաղաքական իրավունքներին և պարտավորություններին, այն է՝ քաղաքական համակարգին: Այս հարթության զարգացումը պետք է բխի ժողովրդավարական մոտեցումներից և մասնակցային հմտություններից՝ հիմքում ունենալով քաղաքական համակարգերին վերաբերող գիտելիք:
Քաղաքացիության քաղաքական հարթությունը պետության կողմից կարող է խթանվել իրազեկվածության աստիճանի բարձրացման և կրթության միջոցով: Օրինակ՝ ժողովրդավարություն հասկացության, քաղաքական կառուցվածքների, քաղաքական կուսակցությունների, քվեարկության համակարգի մասին իրազեկելու, ազգային և միջազգային մակարդակներում որոշումների ընդունման գործընթացներին քաղաքացիների մասնակցությունը խրախուսելու, լոբբիստական խմբերի ձևավորման և մասնակցության այլ ձևերի զարգացման միջոցով:

Տնտեսական հարթություն - քաղաքացիության տնտեսական հարթությունը վերաբերում է անհատին, սպառող - շուկա հարաբերությանը: Այն ենթադրում է աշխատանքի իրավունքի նվազագույն մակարդակի առկայություն: Քաղաքացիության տնտեսական հարթության զարգացմանը կարելի է հասնել հետևյալ գործոնների միջոցով, օրինակ՝ մասնագիտական որակավորման բարելավում, տնտեսական գործընթացներում փոքրամասնությունների ինտեգրում, տեղական և միջազգային տնտեսական համագործակցության մարտահրավերներին առերեսում, գլոբալիզացման մարտահրավերների ներգրավում՝ նորարարական մեթոդների և ռազմավարությունների կիրառմամբ:

Սոցիալական հարթություն - քաղաքացիության սոցիալական հարթությունը զարգացնելու համար անհրաժեշտ են սոցիալական հմտություններ և հասարակությունում սոցիալական հարաբերությունների վերաբերյալ գիտելիք: Քաղաքացիության սոցիալական հարթության զարգացումը կարող է խրախուսվել հետևյալ գործոններով. օրինակ՝ սոցիալական մեկուսացման դեմ պայքար, մարդու իրավունքների պաշտպանություն, հասարակության տարբեր խմբերի (օրինակ՝ ազգային փոքրամասնությունների և էթնիկ խմբերի) համախմբում, սոցիալական

հարցերի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացում (օրինակ՝ սոցիալական և էթնիկ խմբերի իրավիճակի վերաբերյալ), աշխատելու հավասարություն, սոցիալական ապահովություն, բարեկեցություն և այլն:

Մշակութային հարթություն - քաղաքացիության մշակութային հարթությունը վերաբերում է համընդհանուր մշակութային ժառանգություն հասկացությանը: Մշակութային հարթությունը պետք է զարգանա մշակութային ժառանգության գիտելիքի միջոցով, ինչպես նաև պատմության և հիմնական հմտությունների միջոցով: Քաղաքացիության մշակութային հարթությունը կարող է ամրապնդվել օրինակ՝ միջմշակութային փորձի խթանմամբ, շրջակա միջավայրի պահպանմամբ, ռասիզմի և խտրականության դեմ պայքարով, ազգային և գլոբալ պատմամշակութային ժառանգության և պատմության վերաբերյալ գիտելիքի տարածմամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների և ԶԼՄ-ների դերակատարությունների քննարկումներով:

Պետք է հիշել

Պետությունը գոյատևում է հանուն քաղաքացիների և վերջիններիս իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Մարդկանց և իրենց կառավարության միջև սոցիալական դաշինքի հիման վրա քաղաքացիներն ունեն մտածելու, հավատալու, իրենց համոզմունքներն արտահայտելու, ինքնակազմակերպվելու, աշխատելու, գնելու և վաճառելու ազատություն, ինչպես նաև իրենց կառավարությունն ազատորեն ընտրելու և փոխելու (նույնիսկ դրանից հրաժարվելու) իրավունք:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ



ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է ընտրելու և ընտրությունների միջոցով որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացները կարգավորվում են.

- ✓ ՀՀ Սահմանադրությամբ
- ✓ Ընտրական օրենսգրքով
- ✓ Տեղական ինքնակառավարման մասին օրենքով
- ✓ Հանրաքվեի մասին օրենքով
- ✓ Տեղական հանրաքվեի մասին օրենքով
- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է **ազատ ընտրությունների, հանրաքվեների**, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

ՀՀ Սահմանադրությամբ՝ Հայաստանի Հանրապետությունում տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք (տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններ) Հոդված 48-րդ):

Պետք է իմանալ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ընտրելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Անգործունակ են համարվում այն անձինք, ովքեր հոգեկան խանգարման հետևանքով չեն կարող հասկանալ իրենց գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:

Ինքնին հոգեկան խանգարում ունեցող անձը չի կարող համարվել անգործունակ. հոգեկան խանգարման հետևանքով անձը կարող է անգործունակ ճանաչվել միայն դատարանի որոշմամբ:

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների ընտրական իրավունքն իրացվում է հետևյալ եղանակներով.

- ✓ ուղղակի ընտրություններ,
- ✓ միջնորդավորված ընտրություններ:

Ուղղակի են համարվում այն ընտրությունները, երբ քաղաքացին այս կամ այն թեկնածուի կամ հարցի օգտին ուղղակի քվեարկության միջոցով է կատարում իր ընտրությունը՝ իր վերաբերմունքն արտահայտելով կոնկրետ անձի կամ կոնկրետ հարցի առնչությամբ:

Միջնորդավորված ընտրությունների դեպքում քաղաքացին քվեարկում է անձի կամ անձանց խմբի օգտին, որը հետագայում իր փոխարեն կատարում է համապատասխան նշանակումներ կամ տալիս լուծումներ:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների ուղղակի ընտրությամբ ընտրվում են կառավարման հետևյալ մարմինները.

- ✓ Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և ավագանի,
- ✓ Ազգային ժողով:

Համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու կողմից անուղղակի ընտրակարգով ընտրվում է համայնքի ղեկավարը:

Պետք է իմանալ

2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հանրապետության նախագահին ուղիղ, անմիջական քվեարկության միջոցով ընտրելու իրավունք չունեն:

Հայաստանի Հանրապետության նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից:

Հանրապետության նախագահի թեկնածուներ կարող են առաջադրվել Ազգային ժողովի պատգամավորների, նրանց ընդհանուր թվի առնվազն ¼-ի, այսինքն՝ առնվազն 26 պատգամավորի կողմից:

Առաջադրված նախագահի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է պատգամավորների ընդհանուր թվի ¾-ը, այսինքն՝ 76 պատգամավոր:

2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ունենալու է առնվազն 101 պատգամավոր:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

➢ **Քվեարկությունն իրականացվում է կամավոր և ազատ սկզբունքով:**

Ինչ է դա նշանակում

– Ընտրության իրավունք ունեցող որևէ անձ քվեարկություն իրականացնելիս որևէ անձի կամ որևէ հանգամանքի ազդեցության և հարկադրանքի չպետք է ենթարկվի:

– Քվեարկություն կատարելիս քվեարկողը չպետք է ենթարկվի կամ հետևի այլ անձի ցուցումների, անկախ նրանից, թե ով է ցուցումներ տվողը՝ իր ընտանիքի անդամը, ընկերը, գործատուն, ուսուցիչը, թե այլ ոք:

– Մեծամասնական ընտրակարգի դեպքում այս կամ այն թեկնածուի օգտին ընտրողն իր ձայնը ներկայացնում է քվեաթերթիկի վրա փակ, գաղտնի կարգով նշում կատարելով: Համամասնական ընտրակարգի դեպքում ընտրողն իր ձայնը տալիս է այս կամ այն կուսակցությանը՝ տվյալ կուսակցության քվեաթերթիկն ընտրելու և այն ծրարի մեջ դնելու միջոցով:

– Իր կատարած ընտրության մասին ընտրողը պարտավոր չէ տեղեկացնել մեկ այլ անձի, անկախ նրանից, թե ով է այդ անձը՝ իր ընտանիքի անդամը, ընկերը, գործատուն, ուսուցիչը, թե այլ ոք:

– Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողն իրավունք չունի տեղամասում հայտարարել, թե ինչպես է քվեարկել: Գաղտնիության նախապայմանը կարևոր է, քանի որ բաց կամ ոչ գաղտնի քվեարկության հետևանքով կարող են դրսևորվել ընտրողների ազատ կամքի արտահայտման խախտումներ: Այս նպատակով օրենքով արգելվում է ընտրողի ազատ կամքի նկատմամբ վերահսկողությունը:

Պետք է իմանալ

Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է:

Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք ընտրողին որևէ թեկնածուի/ կուսակցության օգտին կամ դեմ քվեարկել պարտադրելու, ինչպես նաև ընտրողին ընտրություններին մասնակցել կամ չմասնակցել հարկադրելու իրավունք չունի:

➢ **Ընտրությունները հրապարակային են:**

Ինչ է դա նշանակում

Ընտրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ընտրական փաստաթղթերը, ինչպես նաև արդյունքների մասին տեղեկատվությունը պետք է ներկայացվի հանրությանը: Այդուամենայնիվ, ընտրական գործընթացների հրապարակայնությամբ հանդերձ, պահպանվում է քվեարկության գաղտնիությունը, ինչը պահանջում է, որ ընտրական փաստաթղթերը, որոնք կարող են բացահայտել կոնկրետ անձի քվեարկության վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև կոնկրետ անձի քվեարկության գործընթացը, պահվեն գաղտնի:

Պետք է իմանալ

Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ բոլոր ընտրական տեղամասերում քվեարկության ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացն ուղիղ ժամանակային ռեժիմում տեսանկարահանվում և միաժամանակ հեռարձակվում է համացանցով՝ հատուկ ստեղծված կայքի (երի) միջոցով:

Տեսախցիկների տեսադաշտում պետք է լինեն քվեատուփը, ընտրողների գրանցման և քվեարկության ծրարների, քվեաթերթիկների հատկացման, քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացները, ինչպես նաև տեղամասային կենտրոնն ու դրա մուտքը՝ մինչև 50 մետր շառավղով:

Տեսանկարահանումն իրականացվում է քվեարկության գաղտնիության պահանջի պահպանմամբ:

➢ **Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքը գործում է ընտրության ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա:**

Ինչ է դա նշանակում

Ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի ընտրություններին կարող է մասնակցել իր ցանկությամբ: Սա չի ենթադրում պարտադիր ձայն տալ այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության օգտին, ինչը կարող է հանգեցնել կամքի ազատ արտահայտման ճնշման և հարկադիր մասնակցության:

Ընտրողն ազատ է քվեարկության ժամանակ իր ձայնը որևէ թեկնածուի կամ կուսակցության չտրամադրել՝ այդ եղանակով ևս արտահայտելով իր մասնակցությունը:

Ընտրական գործընթացներին մասնակցելը, բայց այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության օգտին չքվեարկելը ևս ընտրական իրավունքի ազատ իրացման դրսևորում է:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների արդյունավետ կազմակերպման և բնականոն ընթացքն ապահովելու համար ձևավորվում են ընտրական հանձնաժողովներ:

Ընտրական հանձնաժողովն անձանց խումբ է, որն ապահովում է ընտրական գործընթացների նախապատրաստությունը, իրականացումն ու ամփոփումը, ընտրական փաստաթղթերի կազմման, լրացման և պահպանման աշխատանքները, ինչպես նաև ընտրական իրավունքի պաշտպանությունն ու իրացումը:

Ընտրական հանձնաժողովի կազմը

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների կազմակերպման նպատակով ձևավորվում են հետևյալ հանձնաժողովները.

- ✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողով
- ✓ Տարածքային ընտրական հանձնաժողովներ
- ✓ Տեղամասային ընտրական հանձնաժողովներ

Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացների կազմակերպման և արդյունավետ իրականացման համար պատասխանատու է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, կայքը՝ www.elections.am:

Ընտրական հանձնաժողովը կազմված է 7 անդամից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ Ազգային ժողովի համապատասխան հանձնաժողովի առաջարկությամբ, վեց տարի ժամկետով:

Տարածքային ընտրական հանձնաժողովների, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները նշանակվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Պետք է իմանալ

Ընտրական հանձնաժողովներն անկախ են և իրենց գործառույթներն իրականացնելիս չեն ենթարկվում տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմիններին:

Ընտրական հանձնաժողովի անդամները մասնակցում են մասնագիտական դասընթացների, այնուհետև հանձնում ստուգարք և ստանում որակավորման վկայական:

Ընտրական հանձնաժողովի կողմից իր գործառույթների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումները, հանձնաժողովների կողմից կայացված որոշումները կարող են բողոքարկվել:

Բողոքարկման իրավունք ունեն.

– այն ընտրողները, ովքեր համարում են, որ խախտվել կամ կարող է խախտվել իրենց ընտրական իրավունքը,
– վստահված անձինք, եթե համարում են, որ խախտվել է իրենց վստահորդի իրավունքը,
– դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, եթե համարում է, որ խախտվել է իր իրավունքը,
– ընտրություններին մասնակցող կուսակցության լիազոր ներկայացուցիչը, եթե գտնում է, որ խախտվել է իր կամ իր վստահորդ կուսակցության կամ կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուի իրավունքը:

Վստահված անձինք

Ընտրություններին մասնակցող կուսակցություններն ընտրական ցուցակները գրանցելուց, իսկ թեկնածուները գրանցվելուց հետո ընտրական հանձնաժողովներում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպություններ-

րի, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք:

Պետք է իմանալ

Վստահված անձ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, դիտորդները, թեկնածուները, ընտրական հանձնաժողովների անդամները:

Վստահված անձն իրավունք ունի մասնակցել ընտրական բոլոր գործընթացներին, անարգել ծանոթանալ բոլոր փաստաթղթերին, բողոքարկել ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները, անգործությունը:

Ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող են ներկա գտնվել համայնքի ղեկավարի և ավագանու անդամի յուրաքանչյուր թեկնածուի մեկ վստահված անձ և ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկ վստահված անձ: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող է ներկա գտնվել ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մինչև երկու վստահված անձ:

Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները չեն կարող ունենալ վստահված անձ:

Դիտորդներ

Դիտորդությունն ընտրական գործընթացների՝ նախապատրաստում, իրականացում, արդյունքների ամփոփում և արդյունքների բողոքարկում, օրինականության նկատմամբ անաչառ վերահսկողությունն է:

Դիտորդություն իրականացնելու իրավունք ունեն.

– միջազգային կազմակերպությունները,
– օտարերկրյա հասարակական կազմակերպությունները,
– տեղական հասարակական կազմակերպությունները:

Դիտորդություն իրականացնելու ցանկություն ունեցող կազմակերպությունները նախապես դիմում են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, ներկայացնում այն անձանց վերաբերյալ տեղեկատվություն, ովքեր մասնակցելու են դիտորդությանը: Հանձնաժողովի կողմից ճանաչվում է դիտորդություն իրականացնելու իրավունքը՝ իրականացվում է հավատարմագրում և տրվում են համապատասխան վկայականներ:

Հասարակական կազմակերպություններն իրենց դիտորդների համար կազմակերպում և անցկացնում են ընտրական օրենսդրության ու կազմակերպության դիտորդների վարքագծի կանոնների ուսուցում:

Այն անձինք, ովքեր ցանկանում են Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող այս կամ այն ընտրությունների ժամանակ դիտորդություն իրականացնել, պետք է դիմեն հասարակական կազմակերպություններին, որպեսզի ընդգրկվեն վերջիններիս ցուցակներում և ներկայացվեն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Դիտորդն իրավունք ունի ներկա գտնվել.

– ընտրական հանձնաժողովի նիստերին,
– քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում,
– քվեարկության արդյունքների հաշվարկմանը:

Ընտրողների ռեգիստր և ընտրական ցուցակներ

Ընտրական իրավունք ունեցող անձինք հաշվառվում են Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում:

Ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է լիազոր մարմինը:

Պետք է իմանալ

Ընտրողների ռեգիստրը տեղեկատվական համակարգ է, որտեղ գրանցվում են Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված, Հայաստանի Հանրապետության որևէ համայնքում հաշվառված, ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Լիազոր մարմինը յուրաքանչյուր տարի երկու անգամ՝ հունիսին և նոյեմբերին, ընտրողների ռեգիստրն էլեկտրոնային տարբերակով ներկայացնում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը տեղադրվում է համացանցում:

Յուրաքանչյուր անձ անարգել հասանելիություն ունի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային տիրույթում տեղադրված ընտրողների ռեգիստրին: Ընտրողների ռեգիստրում ընտրողների վերաբերյալ ցանկացած ոչ ճիշտ տեղեկատվություն ուղղելու համար յուրաքանչյուր ոք կարող է դիմում ներկայացնել լիազոր մարմնին:

Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել այն փաստերը, որոնք հիմնավորում են առկա անճշտությունները:

Դիմումի հիման վրա, 30 օրվա ընթացքում լիազոր մարմինը վերացնում է անճշտությունները:

Որպես անճշտություն կարող են դիտարկվել, օրինակ՝ ընտրողների հաշվառման հասցեի վերաբերյալ սխալ տեղեկատվությունը, ընտրելու իրավունք չունեցող անձի վերաբերյալ տվյալների ներառումը, հաշվառում չունեցող անձի տվյալների ներառումը և այլն:

Սա է պատճառը, որ խրախուսվում է ընտրողների ռեգիստրում տվյալների ճշգրտումների և սխալների հայտնաբերման դեպքում դրանք վերացնելու դիմումներ ներկայացնելը:

Ընտրողների ռեգիստրի հիման վրա կազմվում են ընտրողների ցուցակներ՝ ըստ ընտրական տեղամասերի: Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ ընտրողների հաշվառման հասցեների: Կազմված ցուցակների համաձայն՝ ընտրողների տվյալները համարակալվում են:

Տվյալ համայնքում հաշվառում չունեցող, բայց ընտրելու իրավունք ունեցող անձանց տվյալների հիման վրա կազմվում են առանձին ցուցակներ:

Ընտրական ցուցակները նախապես փակցվում են տվյալ տեղամասային հանձնաժողովի տարածքում:

Քվեարկությունից 40 օր և 7 օր առաջ լիազոր մարմինն ընտրողների ցուցակները տեղադրում է համացանցում www.police.am հասցեով:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ընտրական ցուցակներում առկա անճշտությունները վերացնելու դիմում ներկայացնել լիազոր մարմնին: Դիմումները պետք է ներկայացնել ոչ ուշ, քան քվեարկությունից 10 օր առաջ: Լիազոր մարմինը 5 օրվա ընթացքում վերացնում է այդ անճշտությունները և գրավոր իրազեկում դիմումատուին:

Այն դեպքում, երբ տվյալներն անձամբ դիմումատուին չեն վերաբերում, ապա անճշտությունները վերացնելուց հետո տեղեկատվություն - ծանուցումը տեղադրվում է www.azdarar.am կայքում:

Ընտրողների ցուցակն ընդգրկում է հետևյալ տեղեկատվությունը.

- ընտրողի անունը, ազգանունը, հայրանունը,
- ընտրական տեղամասի համարը,
- ընտրողի հաշվառման հասցեն կամ հաշվառում չունենալու դեպքում՝ քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում փաստացի գտնվելու վայրի հասցեն,

– ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը,
– ընտրողի նույնականացման քարտի, կենսաչափական անձնագրի և ոչ կենսաչափական անձնագրի համարը (եթե ընտրողն ունի անձը հաստատող համապատասխան փաստաթղթեր),
– տվյալ տարածքի ընտրողների համար նաև թվային շտեմարանում առկա լուսանկարը:

Պետք է իմանալ

Այն ընտրողները, ովքեր ընդգրկված չեն ընտրողների ցուցակներում և չեն կարողացել քվեարկությունից առաջ դիմում ներկայացնել լիազոր մարմնին, քվեարկության օրը կարող են ներկայանալ ընտրատեղամաս:

Լիազոր մարմնի տեղեկանքի կամ դատական ակտի հիման վրա տեղամասում կազմվում են ընտրողների լրացուցիչ ցուցակներ:

Նախընտրական քարոզչություն

Ընտրողներին այս կամ այն հարցը, կուսակցության կամ թեկնածուի ծրագրերը հասանելի դարձնելու նպատակով սահմանվում է հատուկ ժամանակահատված, որի ընթացքում արդյունավետորեն և սահմանված կանոնների համաձայն պետք է հաղորդակցություն ապահովվի ընտրողների հետ:

Նախընտրական քարոզչությունը խիստ կարևոր է: Այդ գործընթացի շնորհիվ է, որ ընտրողները կարողանում են պատկերացում կազմել տեղական ինքնակառավարման մարմինների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների առաջարկով տվյալ համայնքում, ինչպես նաև կենտրոնական կառավարման համակարգում առաջիկա չորս-հինգ տարում սպասվելիք և իրականացվելիք քաղաքականության մասին:

Քարոզչության համար օրենքով սահմանվում է կոնկրետ ժամանակահատված, թեև ավելի շուտ քարոզչության իրականացումը չի արգելվում:

Նախընտրական քարոզչությունը **սկսվում է** ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար օրենքով սահմանված գրանցման ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Հայաստանի Հանրապետությունում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ձևավորված ընտրական մշակույթի համաձայն հիմնականում իրականացվում են հետևյալ գործողությունները.

– առաջարկվող ծրագրերի տպագրություն և տարածում ընտրողների շրջանում,
– թեկնածուների/ կուսակցությունների վերաբերյալ տեղեկատվության տպագրություն և տարածում,
– հանդիպումներ ընտրողների հետ և այլն:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունները, թեկնածուներն ունեն քարոզչության հավասար հնարավորություններ: Քարոզչություն իրականացնելու համար կուսակցությունների, թեկնածուների կողմից կարող են ձևավորվել ընտրական շտաբներ:

Քարոզչական պաստառները, տպագիր և այլ նյութերը կարող են փակցվել և օգտագործվել առանց սահմանափակման:

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ մասնակից յուրաքանչյուր կուսակցությանը տրամադրվում է **նախընտրական քարոզչության անվճար եթերաժամանակ**.

- Հանրային հեռուստատեսությամբ՝ մինչև 60 րոպե,
- Հանրային ռադիոյով՝ մինչև 120 րոպե:

Նախընտրական քարոզչության վճարովի եթերաժամանակը չի կարող գերազանցել.

- Հանրային հեռուստատեսությամբ՝ մինչև 120 րոպեն,
- Հանրային ռադիոյով՝ մինչև 180 րոպեն:

Երևանի ավագանու ընտրությունների **նախընտրական քարոզչության ժամանակ ևս հատկացվում է անվճար եթերաժամանակ.**

- Հանրային հեռուստատեսությամբ՝ մինչև 50 րոպե,
- Հանրային ռադիոյով՝ մինչև 50 րոպե:

Երևանի ավագանու ընտրությունների **նախընտրական քարոզչության վճարովի եթերաժամանակը չի կարող գերազանցել.**

- Հանրային հեռուստատեսությամբ՝ մինչև 50 րոպեն,
- Հանրային ռադիոյով՝ մինչև 80 րոպեն:

Քարոզչություն իրականացնելու համար ընտրություններին մասնակցող կուսակցությունը բացում է նախընտրական հիմնադրամ, որը համալրվում է կուսակցության, կուսակցական դաշինքի, ինչպես նաև ընտրող անհատ քաղաքացիների կամավոր մուծումներով:

Պետք է իմանալ

Ընտրական շտաբներ չեն կարող տեղակայվել քաղաքապետարանի, մարզպետարանի և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում:

Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

Քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրը մինչև ժամը 20:00-ն արգելվում է որևէ միջոցի կիրառմամբ թեկնածուների կողմից քարոզչական բնույթի տեղեկատվության տարածումը: Այդ ժամանակահատվածում ցանկացած տեսակի քարոզչությունն արգելվում է:

Քվեարկություն

Քվեարկությունը քաղաքացու կողմից իր ձայնը քվեի միջոցով ներկայացնելու, արտահայտելու գործընթացն է:

Հայաստանի Հանրապետությունում սահմանվում է ֆիզիկապես տեղամաս ներկայանալու և տեղում քվեարկություն կատարելու տարբերակը: Քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվելու դեպքում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն անցնող ընտրողները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները, ինչպես նաև օտարերկրյա պետություններում երկարատև ծառայողական գործուղման կամ ուսման մեջ գտնվող զինծառայողները, Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից)՝ արտասահմանում տեղակայված ներկայացուցչությունների՝ ընտրելու իրավունք ունեցող աշխատակիցները և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները կարող են մասնակցել Ազգային ժողովի ընտրություններին՝ քվեարկելով էլեկտրոնային եղանակով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և ժամկետներում:

Քվեարկությունը կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում ձևավորվում են տեղամասային կենտրոններ: Տեղամասային կենտրոնը հատուկ կանոններով կահավորած սենյակ կամ դահլիճ է, որտեղ կազմակերպվում է քվեարկության գործընթացը:

Տեղամասային կենտրոնը կահավորվում է այնպես, որպեսզի քաղաքացիներին մուտքի և ելքի, ինչպես նաև հանձնաժողովին արդյունավետ աշխատանքի հնարավորություն ընձեռնվի: Միաժամանակ այն պետք է դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների գործունեության համար արդյունավետ հասանելիություն ապահովի:

Յուրաքանչյուր ընտրական տեղամաս ձևավորվում է ոչ ավելի, քան 2000 ընտրողի սպասարկելու համար:

Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող ընտրողների համար տեղամասային կենտրոններում պետք է քվեարկությունն ապահովող համապատասխան հնարավորություններ նախատեսվեն:

Քվեարկության օրն ինքնուրույն տեղամասային կենտրոն ներկայանալու հնարավորություն չունեցող ընտրողների համար քվեարկությունը կազմակերպվում է ստացիոնար բժշկական հաստատությունում՝ շրջիկ արկղի միջոցով:

Քվեարկության խցիկներ

Քվեարկության իրականացման համար տեղամասում ձևավորվում են հատուկ խցիկներ, որոնք ապահովում են քվեարկության գաղտնիությունը: Քվեարկության խցիկներում տեսանկարահանող և ձայնագրող սարքավորումներ չեն տեղադրվում: Քվեարկության խցիկում առկա տեղեկատվությունը որևէ կերպ այլ անձանց հասանելի չի դառնում:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ քվեարկության խցիկում տեղադրվում է գրիչ՝ քվեաթերթիկի վրա նշում կատարելու համար: Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում քվեախցիկում գրիչ չի տեղադրվում, քանի որ քվեարկությունն իրականացվում է կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկն ընտրելու և այն ծրարի մեջ դնելու միջոցով:

Տեղամասերում կարող է տեղադրվել մեկ կամ մի քանի խցիկ՝ պայմանավորված ընտրողների թվով:

Յուրաքանչյուր 750 ընտրողի համար նախատեսվում է մեկ քվեարկության խցիկ. 750-ից ավելի ընտրողների առկայության պարագայում տեղադրվում է երկու խցիկ:

Նույն տեղամասում մեկից ավելի քվեախցիկի առկայության դեպքում դրանք տեղադրվում են միմյանցից առնվազն մեկ մետր հեռավորությամբ:

Քվեարկության խցիկում տեղադրվում է առանձին տուփ, որի մեջ ընտրողը հետագայում պետք է գցի իր կողմից չօգտագործված քվեաթերթիկները:

Քվեաթերթիկ և ծրար

Քվեարկության գաղտնիության ապահովման նպատակով քվեաթերթիկները ներկայացվում են հատուկ սահմանված ծրարների միջոցով:

Քվեաթերթիկների քանակը տարբեր է՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով.

- Ազգային ժողովի ընտրություններ,
- համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ,
- միաժամանակ մի քանի ընտրություններ:

Ազգային ժողովի ընտրություններ

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր կուսակցություն ունի իր առանձին քվեաթերթիկը:

Քվեաթերթիկի առաջին էջին նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

– կուսակցության անվանումը,
– կուսակցությանը տրված համարը,
– համապետական ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անուններն ու հայրանունները:

Ազգային ժողովի ընտրությունների համար հատկացվում է ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և մեկ ծրար:

Համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ

Համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունների ժամանակ հատկացվում է մեկ քվեաթերթիկ և մեկ ծրար:

Միաժամանակ մի քանի ընտրություններ

Միաժամանակ մի քանի ընտրություններ՝ Ազգային ժողովի և համայնքի ղեկավարի, ավագանու ընտրություններ իրականացվելու պարագայում յուրաքանչյուրի համար հատկացվում է համապատասխան քանակությամբ քվեաթերթիկներ:

Պետք է իմանալ

Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ տրամադրվում է մեկ ծրար և յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ հատկացվում է մեկ քվեաթերթիկ և մեկ ծրար:

Օրինակ՝ Ազգային ժողովի ընտրություններին 5 կուսակցություն մասնակցելու դեպքում առկա է լինելու հինգ քվեաթերթիկ և մեկ ծրար:

Քվեարկության կարգը

Տեղամասում քվեարկությունը սկսվում է առավոտյան ժամը 08:00-ին:

Քվեարկության գործընթացը կազմակերպելու նպատակով իրականացվում են հետևյալ քայլերը.

1. ընտրողը, մտնելով ընտրատեղամաս, մոտենում է մասնագետին, ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթը,
2. մասնագետը ստուգում է ընտրողի ինքնությունը ներկայացված փաստաթղթում առկա լուսանկարի միջոցով,
3. եթե ընտրողը ներկայացրել է անձնագիր կամ նույնականացման քարտ, ապա մասնագետը ներկայացված փաստաթուղթը ներմուծում է տեխնիկական սարքավորման մեջ, որն ավտոմատ եղանակով ընթերցում է անձը հաստատող փաստաթղթի համարը:

   Անձի ինքնությունը ստուգելու արդյունքում կարող են հայտնվել հետևյալ տարբերակները.

   - դեղին նշան, եթե տվյալ անձը գրանցված չէ այդ ընտրատեղամասում որպես ընտրող,
   - կարմիր նշան, եթե տվյալ անձը մեկ այլ տեղամասում արդեն մասնակցել է քվեարկության,
   - կանաչ նշան, եթե անձը ստանում է քվեարկության թույլտվություն,
4. եթե քվեարկության էկրանին հայտնվում են տվյալ ընտրողի լուսանկարը, ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, տեխնիկական սարքավորումը թույլատրում է ընտրողին ներմուծել մատնահետքը,
5. ինքնության ստուգումից և քվեարկության թույլտվություն ստանալուց հետո անձը պետք է իր աջ կամ ձախ ձեռքի ցու-

ցամատի մատնահետքը ներմուծի տեխնիկական սարքավորման մեջ,

6. տեխնիկական սարքավորումը ներմուծված մատնահետքը համեմատում է այն ընտրողի՝ էլեկտրոնային ցուցակում առկա մատնահետքերի հետ,
7. եթե մատնահետքը համընկնում է, ապա էկրանին վառվում է կանաչ նշան և սարքը տպագրում է քվեարկության կտրոն, որն ընտրողի վերաբերյալ պարունակում է հետևյալ տեղեկատվությունը.
   - ընտրողների ցուցակում հերթական համարը,
   - ընտրողի անուն ազգանունը,
   - քվեարկության կտրոնի հերթական համարը,
   - ընտրողի լուսանկարը,
8. ընտրողն անձը հաստատող փաստաթուղթը և քվեարկության կտրոնը վերցնելով՝ մոտենում է ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամին,
9. հանձնաժողովի անդամը, ըստ ներկայացված քվեարկության կտրոնի համարի, գրանցում է ընտրողին ընտրական ցուցակում և այդտեղ դնում է իր անհատական կնիքը,
10. այնուհետև հանձնաժողովի անդամը կնքում է նաև քվեարկության կտրոնը և վերադարձնում այն ընտրողին,
11. քվեարկության կնքված կտրոնով ընտրողը մոտենում է հանձնաժողովի մեկ այլ անդամի, ով տրամադրում է յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար: Ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկները ստանալուց:

Պետք է հիշել

Տեխնիկական սարքավորումը կարող է չճանաչել ընտրողի մատնահետքը, այդ դեպքում ներմուծվում է մյուս ձեռքի ցուցամատի մատնահետքը:

Իսկ եթե չի ճանաչում նաև այդ մատնահետքը և էլեկտրոնային ցուցակում առկա են այդ ընտրողի այլ մատնահետքեր, ապա ընտրողը ներմուծում է մյուս մատների մատնահետքերը, մինչև տեխնիկական սարքավորումը չճանաչի որևէ մատնահետք:

Եթե որևէ մատնահետք չի ճանաչվում, ապա ընտրողի գրանցումն իրականացվում է անձը հաստատող փաստաթղթի հիման վրա:

Ինչ փաստաթուղթ է պետք ունենալ քվեարկության համար

Քվեարկության իրականացման համար ընտրողի անձը հաստատող փաստաթուղթ է համարվում.

– նույնականացման քարտը,
– կենսաչափական անձնագիրը,
– ոչ կենսաչափական անձնագիրը,
– նույնականացման քարտին կամ կենսաչափական անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը, որը տրվել է լիազոր մարմնի կողմից,
– քրեակատարողական հիմնարկում գտնվող ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը, իսկ զինծառայողների համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը:

Քվեաթերթիկների վրա նշում կատարելու կարգը

Քվեաթերթիկների վրա նշում կատարելու և քվեաթերթիկը լրացնելու համար սահմանվում են հետևյալ կանոնները.

Ազգային ժողովի ընտրություններ

1. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողը ստանում է յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և մեկ ծրար:
2. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից որևէ մեկին ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով: Քվեաթերթիկի վրա որևէ նշում չի կատարվում:

3. Այն կուսակցությունների քվեաթերթիկները, որոնք չեն ընտրվել տվյալ ընտրողի կողմից, գցվում են քվեարկության խցիկում դրված հատուկ տուփի մեջ:

Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրություններ

1. Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ ընտրողն ընտրություններին մասնակցող կուսակցություններից որևէ մեկին ընտրում է այդ կուսակցության քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դնելու միջոցով:

   Քվեաթերթիկը քվեարկության ծրարի մեջ դրվում է առանց ծալելու: Եթե համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքի ավագանու ընտրություններին մասնակցում է միայն մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա կիրառվում է դեմ քվեարկությամբ առանձին քվեաթերթիկ:

Միաժամանակ մի քանի քվեարկություն

1. Միաժամանակ մի քանի քվեարկություն անցկացվելու դեպքում ընտրողը քվեարկությունն իրականացնում է յուրաքանչյուր տեսակի համար սահմանված կարգով և համապատասխան քվեաթերթիկը տեղավորում համապատասխան ծրարում:
2. Քվեարկելուց հետո ընտրողը ծրարը ձեռքին մոտենում է քվեատուփի մոտ գտնվող հանձնաժողովի անդամին, նրան հանձնում քվեարկության կտրոնը, ով ստուգում է կտրոնը, այնուհետև առանց ընտրողի ձեռքից ծրարը վերցնելու, քվեաթերթիկի վրա փակցնում է ինքնասոսնձվող դրոշմանիշ:
3. Այնուհետև ընտրողը քվեարկելու՝ ծրարը քվեատուփ գցելու հնարավորություն է ստանում:
4. Քվեարկելուց հետո ընտրողն անմիջապես դուրս է գալիս քվեարկության սենյակից:

Պետք է իմանալ

- 2016 թվականին ընդունված Ընտրական օրենսգրքի համաձայն՝ **Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականից հետո տեղի ունեցող ընտրություններն իրականացվելու են քվեարկության ներկայացած անձի ինքնությունը ստուգվելու էլեկտրոնային կարգով**՝ ընտրողների ինքնությունը ստուգող տեխնիկական սարքավորման միջոցով, ուր մուտքագրվում են ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը և ընտրողի մատնահետքերը:
- Եթե ընտրողն ինքնուրույն չի կարողանում քվեարկել, ապա մեկ այլ անձ, ով ընտրական հանձնաժողովի անդամ, դիտորդ, վստահված անձ չէ, կարող է օգնել, որպեսզի ընտրողը քվեարկի:
- Համայնքի ղեկավարի և ավագանու մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ, եթե ընտրողը քվեաթերթիկը սխալ է լրացրել, կարող է դիմել հանձնաժողովի նախագահին և նոր քվեաթերթիկ ստանալ:
- Ազգային ժողովի ընտրությունների և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանիների ընտրության ժամանակ քվեաթերթիկի վրա որևէ նշում չի կատարվում:
- Ընտրողը քվեաթերթիկը ծրարի մեջ է տեղավորում առանց ծալելու:
- Այն դեպքում, երբ ընտրողը որևէ կուսակցության կամ թեկնածուի օգտին չի ցանկանում քվեարկել, դատարկ քվեաթերթիկները գցում է քվեախցում գտնվող տուփի մեջ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրի բնակիչների հանրություն է:

Համայնքի կառավարումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ միջնորդավորված ընտրություն:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են համայնքային խնդիրները լուծելու և համայնքի սեփականությունը տնօրինելու նպատակով:

Ովքե՞ր իրավունք ունեն մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին

Տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ղեկավար և ավագանի, ընտրելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

– ում 18 տարին լրացել է քվեարկության օրը կամ քվեարկությունից առաջ,
– ովքեր մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունեն Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձինք, ովքեր մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեն Հայաստանի Հանրապետությունում:

Ավագանու անդամների թիվն ըստ համայնքի բնակչության թվի

Ավագանու թիվը	Համայնքում ընտրելու իրավունք ունեցող անձնաց թիվը
Հինգ անդամ	մինչև 1000 ընտրող
Յոթ անդամ	1001-ից 2000 ընտրող
Ինը անդամ	2001-ից 4000 ընտրող
Տասնհինգ անդամ	4001-ից 10 000 ընտրող
Քսանմեկ անդամ	10 001-ից 25 000 ընտրող
Քսանյոթ անդամ	25 001-ից 70 000 ընտրող
Երեսուներեք անդամ	70 001-ից մինչև 300 000 ընտրող
Վաթսունհինգ անդամ	300 000-ից ավելի ընտրող

Ինչպե՞ս են առաջադրվում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների թեկնածուներ կարող են առաջադրել՝

– կուսակցությունները՝ ըստ իրենց համապատասխան տարածքային ստորաբաժանումների որոշումների՝ կուսակցության անդամների կամ կուսակցության անդամ չհանդիսացող անձանց,
– ընտրվելու իրավունք ունեցող անձինք՝ ինքնաառաջադրման կարգով ներկայացնելով համապատասխան դիմում:

Ավագանու անդամների մանդատները համամասնորեն բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև՝ նրանցից յուրաքանչյուրի օգտին քվեարկված քվեաթերթիկների թվին համապատասխան:

Քվեարկության արդյունքներով համայնքի ավագանու անդամների մանդատները բաշխվում են կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների միջև:

Ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) թեկնածուների ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 4%-ը, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 6%-ը:

Կուսակցության անվանում	Քվեների թիվը, տոկոսը	Մանդատների թիվը
Ա	85.015-5%	5 մանդատ ամբողջ թվով 5,316 ոչ ամբողջական թվով
Բ	340.060-20%	21 մանդատ ամբողջ թվով 21,265 ոչ ամբողջական թվով
Գ	510.000-30%	31 մանդատ ամբողջ թվով 31,9 ոչ ամբողջական թվով
Դ	680.000-40%	42 մանդատ ամբողջ թվով 42,524 ոչ ամբողջական թվով
Ընդհանուր	1.615.075 քվե	100 մանդատ ամբողջ թվով 101 ոչ ամբողջական թվով

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրություններ կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Պետք է իմանալ

Համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիներն են ընտրում համայնքի ղեկավար, և համայնքների բնակիչներն ուղիղ ընտրությամբ համայնքի ղեկավար ընտրելու իրավունք չունեն:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովը կարող է ունենալ նվազագույնը 101 պատգամավոր:

Ո՞վ կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավոր

Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

Պատգամավորի թեկնածուն կարող է առաջադրվել միայն մեկ կուսակցության ընտրական ցուցակով:

Ազգային ժողովի ընտրություններն անց են կացվում համամասնական ընտրակարգով:

Ինչ է նշանակում համամասնական ընտրակարգը

Համամասնական ընտրական համակարգի ընտրություններն անց են կացվում կուսակցական ցուցակներով: Այսինքն՝ յուրաքանչյուր կուսակցություն կամ կուսակցական դաշինք ձևավորում է պատգամավորի թեկնածուների սեփական ցուցակը:

Այս դեպքում ընտրողներն իրենց ձայնը տալիս են կուսակցությանը: Ըստ կուսակցության հավաքած ձայների տոկոսային հարաբերակցության, կուսակցությունները տեղ են զբաղեցնում խորհրդարանում:

Կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին և երկրորդ մասերում նշվում են պատգամավորի թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, սեռը, կուսակցական պատկանելիությունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

Կուսակցությունը կամ կուսակցության դաշինքը կուսակցական ընտրական ցուցակները ներկայացնում է ՀՀ կենտրոնական

ընտրական հանձնաժողով՝ ընտրություններին մասնակցելու համար գրանցելու նպատակով:

Գրանցումից հետո ընտրություններին մասնակցող կուսակցություններին վիճակահանությամբ տրամադրվում են հերթական համարներ:

Եթե ընտրությունների արդյունքում կուսակցությունը կամ կուսակցությունների դաշինքը ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, ապա ընդունվում է Ազգային ժողով ընտրելու և մանդատների բաշխման մասին որոշում:

Ինչպե՞ս են բաշխվում մանդատները

Քվեարկության արդյունքներով մանդատները բաշխվում են այն կուսակցությունների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների թվի և անճշտությունների թվի 5%-ը (կուսակցությունների դաշինքի դեպքում 7%-ը):

Այսինքն՝ համարենք, որ Ազգային ժողովի ընտրություններին մասնակցում է չորս կուսակցություն՝ Ա, Բ, Գ, Դ:

Քվեարկությանը բոլոր կուսակցություններին կողմ քվեարկած քվեաթերթիկների ընդհանուր գումարը կազմում է 1 700 000, իսկ անճշտությունների թիվը՝ 300:

Որպեսզի որոշվի, թե արդյոք կուսակցությունը ստացել է 5%, պետք է կատարել հետևյալ թվաբանական գործողությունը և ստանալ այն քվեների թիվը, որը պետք է տվյալ կուսակցությունն ունենա՝ պատգամավորական մանդատների բաշխմանը մասնակցելու համար:

$$\frac{(1\,700\,000+300) \times 5\%}{100\%} = 85\,015$$

Ազգային ժողովի մանդատների թիվը բաշխվում է այն կուսակցությունների միջև, որոնք ստացել են առավելագույն կողմ քվե:

Յուրաքանչյուր կուսակցությանը կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը բազմապատկվում է 101-ով, արդյունքը բաժանվում է 5% կամ 7% պատնեշը հաղթահարած կուսակցությունների

կողմ քվեաթերթիկների ընդհանուր թվի վրա:

Եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 5 (7) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

www.ysps.am
ftv.ysps.am